Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 277 - Ա
որոշման

«ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՔԱՂՑՐԱՎԵՆԻՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Երեխաների պաշտպանության միջազգային օրվա (հունիսի 1) կապակցությամբ՝ պետական մանկատների երեխաներին, երեխայի և ընտանիքի սոցիալական հոգածության ցերեկային խնամքի հաստատություններին և ճգնաժամային կենտրոնների խնամքի և հոգածության տակ գտնվող, ինչպես նաև բարեգործական կազմակերպու-թյունների կողմից հովանավորվող երեխաներին քաղցրավենիքի տոպրակների նվիրաբերում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հրանտ Վարդանյան փողոց 6, ՀՎՀՀ՝ 02269952) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հրանտ Վարդանյան փողոց 6, ՀՎՀՀ՝ 02269952) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Երևան քաղաք, Հայաստանի Հանրապետության Արարատի, Կոտայքի, Շիրակի, Արմավիրի, Տավուշի, Լոռու և Սյունիքի մարզեր, բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 12,604,625 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Սույն հավելվածով ներկայացվող շահառուների ցանկով նախատեսված պետական մանկատների երեխաներ, երեխայի և ընտանիքի սոցիալական հոգածության ցերեկային խնամքի հաստատությունների և ճգնաժամային կենտրոնների խնամքի և հոգածության |

| | | |
|---|---|---|
| | | տակ գտնվող, ինչպես նաև բարեգործական կազմակերպությունների կողմից հովանավորվող երեխաներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2026 թվականի մայիսի 17-31-ը ներառյալ |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ նախատեսվում է սույն հավելվածով ներկայացված շահառուների ցանկով նախատեսված պետական մանկատների, երեխայի և ընտանիքի սոցիալական հոգածության ցերեկային խնամքի հաստատությունների և ճգնաժամային կենտրոնների խնամքի և հոգածության տակ գտնվող, ինչպես նաև բարեգործական կազմակերպությունների կողմից հովանավորվող 1,545 երեխաներին նվիրաբերել քաղցրավենիքի տոպրակներ՝ 12,604,625 դրամ արժողությամբ: Միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2026 թվականի մայիսի 17-ից մինչև մայիսի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Քաղցրավենիքի (1,545 տոպրակ) ձեռքբերում՝ 12,604,625 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ու Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | 1) ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից.<br>2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին |

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

| Պետական մանկատներ | | | |
|---|---|---|---|
| NN ը/կ | Անվանումը | Հասցեն | Երեխաների քանակը |
| 1. | Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ | քաղաք Երևան, Ար. Արմենակյանի փողոց 119 | 33 |
| 2. | Երևանի «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ | քաղաք Երևան, Մ. Ցաղուբյան նրբ. 13, 59 դպրոցի հարևանությամբ Մոնումենտ Գեյն շտաբ (նախկին Արմեն Տիգրանյանի) փողոց 13 | 120 |
| 3. | Գյումրիի «Երեխաների տուն» ՊՈԱԿ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Թամանյանի փողոց 17 | 126 |
| 4. | «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ | Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ, գյուղ Նոր-Խարբերդ, Բաղրամյան 58 | 252 |
| | Ընդամենը՝ 531 երեխա | | |
| | Բարեգործական կազմակերպություններ (մանկատներ) | | |
| NN ը/կ | Անվանումը | Հասցեն | Երեխաների քանակը |
| 1. | «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի ծրագրային քաղաքականության իրականացման «Կոտայք» մասնաճյուղ | Հայաստանի հանրապետության Կոտայքի մարզ, քաղաք Աբովյան, Հերման Գմայների փ. 1 | 126 |
| 2. | «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի ծրագրային քաղաքականության իրականացման «Իջևան» մասնաճյուղ | Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ, քաղաք Իջևան, Երևանյան փ. 1 | 75 |

| | | | |
|---|---|---|---|
| 3. | Երևան քաղաքի միսիոներների բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղ | քաղաք Երևան, Լուսինե Զաքարյան, 37 տուն | 21 |
| 4. | «Նազաշյան մանուկների տուն» կենտրոն-հիմնարկ<br>Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո | քաղաք Երևան, Աharոնյան 2/2 | 21 |
| 5. | Տիրամայր Հայաստանի կուսաստան կրոնական բարեգործական կազմակերպություն | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Չարենցի փողոց 6 | 30 |
| 6. | Երեխաների պաշտպանության կենտրոն հիմնադրամ | քաղաք Երևան, Կ. Ուլնեցի 64 | 35 |
| 7. | «Քյուրքչյան» երեխաների աջակցության սոցիալական կենտրոն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո) | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, քաղաք Վաղարշապատ, Սուրբ Գայանե վանք | 11 |
| | Ընդամենը՝ 319 երեխա | | |
| | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության սոցիալական հոգածության ցերեկային խնամքի հաստատություններ և ճգնաժամային կենտրոններ | | |
| NN ը/կ | Անվանումը | Հասցեն | Երեխաների քանակը |
| 1. | «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Շիրակացու փողոց 10 | 160 |
| 2. | «Երևանի աջափնյակ վարչական շրջանի երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ | քաղաք Երևան, Աջափնյակ վ/շ Մարգարյան 35 | 100 |
| 3. | «Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Տարոն 4, Մեքենաշինության թաղամաս, ՄՆՇ-23 | 100 |
| 4. | «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ | Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Բաղաբերդ 27 | 115 |
| 5. | «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ | քաղաք Երևան, Զաքարիա Սարկավագի փողոց, 145/2 | 120 |

| | | | |
|---|---|---|---|
| 6. | «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ | քաղաք Երևան, Նուբարաշեն, Չնքուշի 14 | 100 |
| | Ընդամենը՝ 695 երեխա | | |
| | Քաղցրավենիքի տոպրակներ ստացող երեխաների ընդհանուր քանակը՝ 1545 երեխա | | |
| | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ — Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

13.05.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ